# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 690 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 564-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Շիրակի ֆերմերների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 05529092) «Էվնադա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04219672) 2026 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ թիվ 2026-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև 2027 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում շինարարական և հովացման համակարգի նյութերի ձեռքբերում՝ 37,608,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության փոխ-վարչապետի 2026 թվականի սեպտեմբերի 1-ի «Շիրակի ֆերմերների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դպրոցների տարածք-ներում ինտենսիվ այգիների հիմնում և ջերմոցների կառուցում» ծրագրի մասին» N 564-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ